Հավելված N 1
«ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2024-08» ծածկագրով հրավերի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ապրանքի										
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը	չ/մ	միավորի գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման	
									հասցեն*	ժամկետը
1	33121270	Լինկոմիցինի հիդրոքլորիդ 30% լուծույթ		Լինկոմիցինի հիդրոքլորիդ - հակամանրէային դեղ, լուծույթ ներերակային և միջմկանային ներարկման համար, կիրառվում է նաև որպես հավելում մենինգակոկային ագարի համար: Փաթեթավորումը առնվազն 1 մլ սրվակներով: Բաղադրությունը յուրաքանչյուր սրվակում՝ Լինկոմիցինի հիդրոքլորիդ 300 մգ: Պիտանելիության ժամկետն առնվազն 70%-ի առկայություն մատակարարման պահին, ընդհանուր ժամկետը՝ նվազագույնը՝ 2 տարի:	սրվակ			10	ք.Երևան, Դ.Մալյան, 37	Պայմանագրի/Համաձայն ագրի կնքման պահից 20 աշխատանքային օրվա ընթացքում
2	33691163	Մենինգակոկային ագար		Սնուցող միջավայրը նախատեսված է կենսաբանական նյութից մենինգակոկերի անջատման և աճեցման համար: 1000 մլ միջավայրում հեմոֆիլների աճի խթանիչի 2 գ և ագարի 10± 2 գրամ առկայություն: Պատրաստի 80 մլ հալեցրած և պաղեցրած միջավայրի վրա ավելացվում է 20.0 մլ 56°C–ում 30 րոպե ինակտիվացված ձիու շիճուկ և 0.5 մլ լինկոմիցինի լուծույթ՝ 1000 մկգ/մլ խտությամբ (հակամանրէի վերջնական քանակը՝ 5 մկգ/մլ): Պիտանելիության ժամկետն առնվազն 70%-ի առկայություն մատակարարման պահին, ընդհանուր ժամկետը՝ նվազագույնը՝ 3 տարի, գործարանային հերմետիկ փաթեթավորմամբ և գործարանային պիտակավորումով (համաձայն ISO 18113 շարքի ստանդարտների պահանջի), 0.25 - 0.5 կգ կշռվածքով: Պարտադիր են՝ խմբաքանակի ծածկագիրը, արտադրող կազմակերպության անվանումն ու հասցեն, արտադրողի կողմից արտադրման ամսաթվի և պիտանելիության ժամկետի հստակ նշումները: Նշված է in vitro կիրառման մասին նշումը կամ նույնականացման լրացուցիչ այլ միջոցներ, օր.՝ կատալոգային համար, ապրանքի համար: Խմբաքանակն ամբողջությամբ լինի միատեսակ (ժամկետի, արտադրողի և փաթեթավորման առումով) և ունենա արտադրողի կողմից խմբաքանակին ներկայացվող որակի հավաստագիր, գործառնական բնութագրերի փորձաքննության արդյունքներ: Արտադրությունն ունենա ներդրված որակի կառավարման համակարգ՝ որակին ներկայացվող միջազգային ԻՍՕ ստանդարտներին համապատասխան (ISO 13485, 9001, CE և/կամ IVD):	կգ			0.5	ք.Երևան, Դ.Մալյան, 37	Պայմանագրի/Համաձայն ագրի կնքման պահից 20 աշխատանքային օրվա ընթացքում
3	33121270	Ձիու շիճուկ նորմալ		Նախատեսված է որոշ պահանջկոտ մանրէների աճեցման համար մանրէաբանական սնուցող միջավայրերի վրա որպես հավելում ավելացնելու ճանապարհով: Պատրաստված է ձի-դոնորների արյունից, իրենից ներկայացնում է դեղին կամ բաց շագանակագույն հեղուկ՝ առանց հեմոլիզի նշանների: Պատրաստուկը պարունակում է 0.5%-ից ոչ ավել քլորոֆորմ: Մեկ սրվակը պարունակում է առավելագույնը 100 մլ շիճուկ: Պահպանման ժամկետը նվազագույնը 1 տարի, 2 -8°C-ում: Պիտանելիության ժամկետը առնվազն 70%-ի առկայություն մատակարարման պահին: Համապատասխանի որակին ներկայացվող միջազգային ստանդարտներին և ունենա որակի հավաստագիր (արտադրողի կողմից խմբաքանակին ներկայացվող հավաստագիր): Գործարանային պիտակավորումով (համաձայն ISO 18113 շարքի ստանդարտների պահանջի), ունենա խմբաքանակի և ապրանքանիշային ծածկագրեր, արտադրողի կողմից արտադրման ամսաթվի և պիտանելիության ժամկետի հստակ նշումներով: Խմբաքանակը կրի հստակ ծածկագիր, ամբողջությամբ լինի միատեսակ (ժամկետի, արտադրողի և փաթեթավորման առումով) և ունենա արտադրողի կողմից խմբաքանակին ներկայացվող որակի հավաստագիր: Արտադրությունն ունենա ներդրված որակի կառավարման համակարգ՝ որակին ներկայացվող միջազգային ԻՍՕ ստանդարտներին համապատասխան (ISO 13485, 9001, CE և/կամ IVD):	մլ			2,000.0	ք.Երևան, Դ.Մալյան, 37	Պայմանագրի/Համաձայն ագրի կնքման պահից 20 աշխատանքային օրվա ընթացքում

***Ապրանքի մատակարարումը՝ բեռնափոխադրումը և բեռնաթափումը համապատասխան պահեստ իրականացվում է Վաճառողի ուժերով և միջոցներով:**